հիւ չերքսեզազգի գնդապետ Էմին աղայի ջանքերի։ Երբ Այգեստանում գնդապետ Հալիմ էֆէնդին ամբոխին հրամայում էր ասելով զարկեցէք, կողոպտեցէք, նորա պաշտօնակից Էմին աղան հրամայեց կրակ բանալ ամբոխի դէմ, որ մտադրուում էր յարձակուել բազարի վերայ և իւր ձեռքով մի մարդ սպանեց։ Ընդհանուր նորա բազարը և քաղաքի կենդրոնական մասը միւս մասերից պակաս վնասուեցան։ Այստեղ կողոպտուեցան 15 տուն և 150 խանութ, այն էլ գաղանի։

Երեքշաբթի, յունիսի 10-ին, անդուսպ ամբոխը հասնում է արդէն հիւպատոսական թաղերին։ Թուսաց հիւպատոսարանի գիմացի տունը, մինչև անգամ նորան կից եղածները կողոպտուելուց յետոյ այրուում են։ Տապարների օգնութեամբ փորձում են խուժել հիւպատոսարանին կից տունը, ուր աղատութիւն էին գտել հաղարաւոր մարդիկ Թուսաց ծածանուող դրօշակի տակ։ Բարեբաղդաբար, յարձակուողները յետ են մղուում։

Զինուած ամբոխը յարձակումն է գործում նաև անգլիական հիւպատոսարանի և միսսիոնարների տան վերայ, ուր ծածկուել էին կանայք և երեխայք։ Անգլիացւոց հիւպատոսը ծածկելով տաճկական սպայական ֆէսը և հրացանը ուսին բարձրանում է տանիքի վերայ։ Զարհուրելի վայրկեան։ Աւելի քան 15,000 երեխայոց և կանանց կեանքը մազից էր կախուած։ Հիւպատոսի երեսը սարսափ է արտայայտում։ Նա լաւ գիտէ տաճկաց կատաղի սարսափելի մոլեռանդութիւնը։ Երկու օր առաջ մի ռումբ գիպչելով անգլիական դրօշակին, ծակել էր հիւպատոսարանի պատը և ընկել նորա ննջարանը, բայց բարեբաղդաբար չէր պայթել։ Հիւպատոսը հրամայում է իւրեան շրջապատող զինուորներին կրակ բանալ ամբոխի վերայ և այդպիսով ստիպում է նորան յետ մղուել դէպի միւս փողոցը։

Երկուշաբթի (կոտորածի 8-դ օրը) լսվում են մայպորուսի ձայները (հրաւէր հանգստեան)։ աւարառութիւնը և հրկիզումը դադարում են։ հայոց թաղերը շրջապատվում են զինուորներով։ Մի քանի օր ապահովութեան վերայ հսկող զինուորները շարունակում են վերջացնել ամբոխի կիսատ թողածը։ ըստ երևոյթին կարգը փոքր ինչ վերականգնեցաւ։ բայց հայերը չէին վստահանում նորաշէնի և հիւպատոսական տների շրջակայքից դուրս եկնել։

Քաղաքը քարուքանդ անելուց յետոյ իւրեանց տեղերը վերադարձող համիդիէն և քրդերը յարձակվում էին անպաշտպան գիւղերի վերայ։

Մի քանի գիւղերում բոլոր բնակիչներին կոտորել են մինչև վերջին մարդը։ Փոքր ի շատ աշքի ընկնող շէնքերը այրուած և քարուքանդ են եղած, որոնց մէջ նաև եկեղեցիները և վանքերը։ մինչև անգամ հռչակաւոր Վարագայ վանքը այժմ աւերակների կոյտ է դարձել։

Առաջնորդարանում։ հիւպատոսարաններում, միսսիոնարների մօտ և այգիների մէջ պատսպարուել են 25,000 հոգի։ Աւելացրէք սոցա վերայ 15,000 քաղաքացիներ։ որոնք կորցրել են իւրեանց բոլոր կարողութիւնը։ Եւ այս բազմութիւնը առանց կերակրի։ կիսամերկ ապրում է բացօդեայ։ սննդվում է ինչով որ պատահի՝ խոտով։ աւելացուկներով։ Ես ինքս իմ աչքով եմ տեսել։ թէ ինչպէս սովեալները կռվում էին միմեանց հետ շամիչի կընճեռի համար։

Ժողովուրդը չգիտէ իւր գլխին գալիքը։ Գիւղերից մէկը միւսից աւելի զարհուրելի լուրեր են հասնում...։

Մ.

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ

Կոնդակ յանուն Սինոդի Ս. Էջմիածնի, թ. 914, որով պատուիրի զտոկոսիս 9000 ռուբլեաց, կտակելոց ի ժառանգաց հանգուցեալ Գ. Փրիդոնեան, ամ ըստ ամէ յանձնել վարչութեան ձեմարանի.

— Յանուն Սինոդի Ս. Էջմիածնի թ. 926 որով պատուիրի կարգադրել զի ծուխն երրորդ քահանայի Ս. Աստուածածին եկեղեցւոյ Նուխուոյ յանձնեսցի Նորընծայ Տ. Երեմեայ քահանայի Ապրիլեան։

— Յանուն Մարգասիրական ընկերութեան Բագուայ, թ. 927, որով պատուիրի ըստոկոսիս 30,000 ռուբլեաց, կտակելոց ի ժառանգաց հանգուցեալ Թումայեանի և 10,000 ռուբլեաց Ագամեանի, առաքել ամ ըստ ամէ վարչութեան ձեմարանի։

— Յանուն վարչութեան ձեմարանի թ. 934, որով պատուիրի ստանալ ի Սինոդէն զտոկոսիս կտակեալ գումարին Փրիդոնեան և մատակարարել զայնս Մուշեղ սարկաւագի, որ ունի երթալ ի Ռուսաստան առ ի յուսանիլ զիրաւաբանական գիտելիս և մանաւանդ զեկեղեցական իրաւագիտութիւնն։ Նաև ստանալ ի Մարգասիրական ընկերութենէ Բագուայ զտոկոսիս գումարաց Թումայեան և Ագամեան և մատակարարել վարդապետացն Տ. Եղնիկի և Յուսկան։ որք ուսանելոց են զաստուածաբանական գիտելիս և Տ. Կոմիտասի, որ ուսանի զեկեղեցական երաժշտութիւն։ Ընդ նըմին և պարտիք դնին ի վերայ վարչութեան հետևիլ ընթացից ուսման չորեցուցեալ և հրահանգել զնոսա։

— Յանուն Գեր. Առաջն. Տփղեաց Տ. Գէորգայ Արքեպիսկոպոսի թ. 959, որով ազատ կացուցանի Տ. Մեսրովբ քահանայն Մելեան ի պաշտօնէ թեմական տեսչութեան եկեղ.— ծխ. դպրոցաց հայոց վիճակին Տփղեաց ի 1 սեպտեմբերի տարւոյս։

— Յանուն Տ. Վրթանէս քահանայի Տ.

գէորգեան Աղեքսանդրապօլու Թ․ 963, որով շնորհէին նմա իրաւունք կրելոյ զկամիլաւկայ։

— Հաստատութեան հոգաբարձութեան դպրոցին Հայոց Սիմֆերոպոլ քաղաքի, Թ․ 1006։

— Օրհնութեան Թ․ 1009 յանուն Յովհաննու Բունեաթեան։

— Օրհնութեան Թ․ 1010 յանուն Գասպար աղայի Կարապետօղլեան։

— Յանուն Ամեն․ Ս․ Պատրիարքի Կ․ Պօլսոյ Տ․ Մատթէոս Արքեպիսկոպոսի Թ․ 1054 որով վաւերական համարի երկրորդ պսակ Յակովբ աղայի Մուրադեան ընդ Հռիփսիմէի և ժառանգք օրինաւոր, իսկ առաջին պսակն լուծեալ։

— Յանուն Տ․ Յակովբ քահանայի Տ․ Գրիգորեան Երևանցւոյ Թ․ 1094, որով շնորհէին նմա իրաւունք կրելոյ զոսկեզօծ խաչ լանջական։

— Հաստատութեան հոգաբարձութեան ս․ Թէոդորոս եկեղեցւոյ Նոր Նախիջևանի Թ․ 1098։

— Հաստատութեան հոգաբարձութեան դպրոցին Հայոց Խարասուբազարի Թ․ 1899։

— Յանուն Տ․ Միքայէլ վարդապետի միաբանի ս․ Երուսաղեմի Թ․ 1115, որով շնորհէին նմա իրաւունք կրելոյ զխաչ վարդապետական ականակուռ։

— Հաստատութեան հոգաբարձութեան օրիորդական դպրոցին ս․ Լուսաւորիչ եկեղեցւոյ Նոր Նախիջևանի, 1138։

— Հաստատութեան հոգաբարձութեան օրիորդական դպրոցին ս․ Գէորգ եկեղեցւոյ Թելաւ քաղաքի․ 1139։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ․

ԿՐՕՆԱԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

1․ Մեղքի բնութիւնը . . . . . . Կ․ Վ․ 343
2 Հաբէշների եկեղեցին 348
3․ Կրկին բնութեան խնդիրը . . . . Կ․ Վ․ 353
4․ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ 364

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ—ՊԱՏՄԱԿԱՆ

5․ Սգոյ օրեր . . . . . Յ․ Յովհաննիսեան 369
6․ Պարթեւները Պարսկաստանում . Ն․ Ք․ 370
7․ Եւրոպական նոր հրատարակութիւններ Կ․ Վ․ 375

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

8․ Դպրոցական բժշկի կարիքն ու նրա պարտքերը . . . . Ն․ Ք 376
9․ ՄԱՆՐԱԼՈՒՐՔ 379

ԱԶԴԱՑԻՆ

10․ ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ 380
Մայր Աթոռ․ . . . .
ՏԱՃԿԱՀԱՅՔ . . . .

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ․

ՅԱՒԵԼՈՒԱԾ․
Յիշատակ դատակնքաց Դորիա եւ Շմոնի Վկայից․

ՄԱՏԵՆԱԽՕՍՈՒԹԻՒՆ․

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ։

ՅԱՒԵԼՈՒԱԾ ԱՐԱՐԱՏԻ 1896 Թ․ ՕԳՈՍՏՈՍ․

ՅԻՇԱՏԱԿ ԴԱՏԱԿՆՔԱՑ
ԳՈՐԻԱ ԵՒ ՇՄՈՆԻ ՎԿԱՅԻՑ
ՈՐ Վ․ԿԱՅԵՑԻՆ ՅՈՒՌՀԱ․

Յամի վեցհարիւրերորդի հինգետասաներորդի թագաւորութեան Աղեքսանդրի[1] Մակեդոնացւոյ, որ է ամ ութերորդ[2] թագաւորութեանն Դեոկղետիանոսի, որ թագաւորեաց զինն և տասն ամ․ ի հիւպատութեան յամին ութ և տասներորդի,[3] Մաքսիմիանոսի [Ա455a] վեցերորդի․ և ի քաղաքապետութեան Նարա և Արգարու որդւոյ Ջոռայ,[4] յամս Կոնա եպիսկոպոսի Ուռհայի, արար Դեոկղետիանոս[5] հալածումն քրիստոնէից[6] յամենայն տեղիս իշխանութեան իւրոյ․ այնպէս զի քահանայք սուրբք չարաչար հարկանք տանջեալ լինէին և դըստերք սուրբ ուխտին յանարգանս խայտառականաց տուեալ լինէին․ և ոչ էր խաղաղութիւն այնմ որ ելանէր և որ մտանէր յիրեաց սրտմտութեան նեղչին, որ նեղէր զնոսա զոհել։

Հրաման թագաւորութեանն սաէպ սա[Բ396a]էպ թագաւորեալ էր ի վերայ բազմաց, և ահ և երկիւղ[7] լուծեալ ի վերայ նոցա․ և առաւել ընդ այս երկնչէին, թէ զուցէ վասն մարմնոյ ուրասցին ոք ի հաւատոց ի կենաց իւրոց որ ի Քրիստոս։ Քանզի զայս փոյթ յանձին ունէին հալածիչքն, զի ի Քրիստոսէ արքայէ ուրասցին, և Ջեւս կուռս նզովեալս խոստովանեսցին, և ամենայն ոք[8] որ գըտանիցէ կամ զնոյ տացէ՝ խունկս[9] նմա արկանիցեն։

---

1 Ա ,,Աղեկսանդի'' 2 Բ ,,ութերորդ'' 3 Բ ,,ութ եւ ի տասներորդի'' 4 Ա ,,զոորա'' Բ ,,զոսրա'' 5 Բ ,,Դեոկղետիանոս'' 6 Բ ,,քրիստոնեից'' սոյն ուղղագրութեամբ յաճախ։

7 Բ ,,երկեիւղ'' 8 Ա ,,խոստովանեսցին եւ ամենայն որ ոք'' Բ ,,խոստովանեսցին ամենայն ոք եւ ամենայն որ ոք'' 9 Բ ,,խունկ'' 10 Բ ,,ի գեղջէ գգնաղա''